ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Անուն, ազգանուն, զբաղեցրած պաշտոնը՝

Լիպարիտ Դրմեյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի ղեկավար

Գործուղման վայրը և ժամկետները

Ֆրանսիայի Հանրապետություն (ք. Ստրասբուրգ), 2025թ. հունիսի 9-ից 13-ը ներառյալ:

Գործուղման նպատակը

Գործուղման նպատակը Եվրոպայի խորհրդ Նախարարների կոմիտեի Մարդու իրավուքների հարցերով թիվ 1531-րդ նստաշրջանին մասնակցությունն էր, *Չիրագովն ընդդեմ Հայաստանի, Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի* և *Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի* գործերով բանավեճի ժամանակ և դրանից հետո կազմված որոշման նախագծերի վերաբերյալ ՀՀ դիրքորոշման ներկայացումն էր:

Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Նիստի ժամանակ Լ. Դրմեյանը, անդրադառնալով *Չիրագովն ընդդեմ Հայաստանի* գործին ևս մեկ անգամ վերահաստատեց Հայաստանի հանձնառությունը տրամադրելու վճռով սահմանված արդարացի փոխհատուցումը՝ ստորագրված մտադրությունների մասին համաձայնագրի կանոնակարգումներով, եթե Ադրբեջանը նույնությամբ ստորագրի *Սարգսյանն ընդդեմ Ադրբեջանի* գործով մտադրությունների մասին համաձայնագիրը և կատարի վճարում: Ադրբեջանական կողմը, թեև նախկինում հաստատել էր իր պատրաստակամությունն այս հարցում, սակայն նախորդող երկու

նիստերի ընթացքում հետ էր կանգնել իր ներկայացված դիրքորոշումից: Այս նիստում ևս Ադրբեջանը որևէ կերպ չվերահստատեց իր նախկին դիրքորոշումը: Անդամ պետությունները ողջունեցին Հայաստանի մոտեցումը և ընդգծեցին, որ այն իրապես խոսում է վճռով սահմանված փոխհատուցումը վճարելու պատրաստակամության մասին: Ադրբեջանի, արդեն երրորդ նիստն անընդմեջ, ժխտողական դիրքորոշումը քննադատվեց բանավեճին մասնակցած բոլոր երկրների կողմից, իսկ որոշ երկրներ հատկապես կոշտ արձագանքեցին: Բանավեճի արդյունքում Նախարարների կոմիտեի քարտուղարությունը պատրաստեց որոշումների նախագիծ, որն արտահայտում էր ներկայացված հիմանական դիրքորոշումները: Որոշումներն ընդունվեցին միաձայն: Սարգսյանի գործով Նախարարների կոմիտեն արձանագրեց, որ Ադրբեջանի նկատմամբ կձեռնարկի ավելի խիստ միջոցներ, եթե մինչև 2026 թվականի մարտ ամիսը որևէ առաջընթաց չգրանցվի սույն գործով:

Մակուչյանը և Մինասյանն ընդդեմ Ադրբեջանի գործով Ադրբեջնաի պատվիրակությունը հայտնեց, որ որևէ գործողություն չի կատարել և ներակայացնելու ոչինչ չունի: Լ.Դրմեյանը հանգամանալից ներկայացրեց այս գործով Ադրբեջանի վրա նախկին նիստի ընթացքում ընդունված որոշմամբ դրված պարտականությունները, որոնցից ոչ մեկը չէր կատարվել և առաջարկեց հաջորդ նիստում՝ 2026 թվականի մարտին, առավել խիստ միջոցներ ձեռնարկել, այդ թվում՝ միջամտող գործընթաց (infringement proceedings), որի արդյունքում Եվրոպական դատարանը գնահատական կտա վճռի չկատարմանը: Հայաստանից բացի ելույթ ունեցան թվով 16 երկրների պատվիրակներ, որոնք բոլորն էլ բացասաբար արձագանքեցին Ադրբեջանի անգործությանը: Բանավեճի արդյունքուում ընդունվեց որոշում, և, առաջին անգամ այս գործի շրջանակում, ընդունվեց միջանկյալ բանաձև, ինչը Նախարարների կոմիտեի վերահսկողությունը խստացնող միջոցներից մեկն է:

18 հունիսի, 2025 թ.